# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք*
*ՀՀ, Արարատի մարզ, գ. Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am*

N

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*« 14» դեկտեմբեր 2015 թվականի N 28*

### *ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերով և "Համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի "բ" կետով*

*համայնքի ավագանին որոշում է `*

1. Դվին համայնքի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար հավելավճար սահմանել նրանց պաշտոնային դրույքաչափի 5 տոկոսի չափով:
2. Համայնքային ծառայության բնագավառում գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարներ սահմանել՝
   - 5-ից մինչև 15 տարին լրանալը՝ պաշտոնային դրույքաչափի 5 տոկոսի չափով:
   - 15 և ավել տարիների համար՝ պաշտոնային դրույքաչափի 10 տոկոսի չափով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Ա. Գրիգորյան | | | |
| Վ. Դերձոյան | | | |
| Գ. Բարեղամյան | | | |
| Գ. Կիրակոսյան | | | |
| Ա. Ատոմյան | | | |
| Կ. Դավթյան | | | |

*Համայնքի ղեկավար ՝* *Ա. Աբրահամյան*

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք*
*ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am*

N

## ՈՐՈՇՈՒՄ

*« 14» դեկտեմբեր 2015 թվականի N 29*

### ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հարապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով*

*համայնքի ավագանին որոշում է ՝*

1. Բյուջեի եկամտային մասի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության հողերի վարձակալության /հաշվեհամար՝ 900415182097/ գումարը պակասեցնել 600 000 /վեց հարյուր հազար/ դրամի չափով:
2. Բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցները /հոդված 4891/ պակասեցնել 600 000 /վեց հարյուր հազար/ դրամի չափով:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Ա. Գրիգորյան | [signature] | | |
| Վ.Դերմոյան | [signature] | | |
| Գ.Բարեղամյան | [signature] | | |
| Գ.Կիրակոսյան | [signature] | | |
| Ա.Ատոմյան | [signature] | | |
| Կ.Դավթյան | [signature] | | |

*Համայնքի ղեկավար ՝* [signature] *Ա.Աբրահամյան*